Հաստատված է

ՀՀ կրթության տեսչական մարմնի
կառավարման խորհրդի
2019 թ. հունվարի 11-ի N 01-01-01 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԷՋԸ
I.	Ներածություն	3
II.	Ընդհանուր իրավիճակը	4
III.	Ծրագրի նպատակը	6
IV.	Ծրագրի նպատակից բխող խնդիրներն ըստ ոլորտների	7
V.	Ծրագրի խնդիրներից բխող միջանկյալ արդյունքներն ըստ թիրախների	8
VI.	Նախադպրոցական կրթության ոլորտի խնդիրներից բխող գործողություններն ըստ միջանկյալ արդյունքների	11
VII.	Հանրակրթության ոլորտի խնդիրներից բխող գործողություններն ըստ միջանկյալ արդյունքների	17
VIII.	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի խնդիրներից բխող գործողություններն ըստ թիրախների	25
IX.	Հաշվետվողականություն	28
X.	Կրթության տեսչական մարմնի գործունեության որակի բարձրացմանն ուղղված գործողություններ	29
XI.	Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ժամանակացույց	31
XII.	Խորհրդատվական գործառույթների ժամանակացույցներ	35

I.Ներածություն

Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) գործունեության **2019** թվականի տարեկան ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) մշակվել է՝

- **ղեկավարվելով** «Տեսչական մարմինների մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» և կրթության բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի՝ կրթության բնագավառին վերաբերող դրույթներով.
- **հիմք ընդունելով** Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 729-Լ որոշմամբ հաստատված Տեսչական մարմնի կանոնադրության պահանջները, տեսչական մարմնի և Կրթության պետական տեսչության նախորդ տարիների գործունեության արդյունքների վերլուծական տվյալները, վերահսկողական գործառույթների արդյունքում հայտնաբերված՝ սովորողների (երեխաների) կրթական իրավունքի պետական երաշխիքների պահպանմանը, կրթության որակի բարձրացմանը, կրթական ծրագրերի յուրացմանը, պետական կրթական չափորոշիչների պահանջների կատարմանը խոչընդոտող ռիսկի գործոնների հիման վրա ձևավորված տվյալների բազան (ըստ տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի դասակարգման) և ռիսկերի կառավարումը:

II. Ընդհանուր իրավիճակը

Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտը, լինելով երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը, էականորեն ետ է մնում հասարարակական զարգացումներից և հասարակության իրական պահանջներից:

Առկա է կրթությունը որակապես նոր մակարդակի վրա բարձրացնելու գերխնդիր:

Կրթության որակը՝ որպես կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք, գնահատվում է իր մեջ ներառվող բաղկացուցիչների արդյունքներով.

Կրթության որակը ներառում է հետևյալ բաղադրիչները՝	1) **սովորողի անհատական կարիքներ** *(հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ պայմաններ)* 2) **կրթության կազմակերպման գործընթաց** *(բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական և վարչական համակազմ)* 3) **ուսուցման ծրագրային բովանդակություն** *(կրթական չափորոշիչներ, առարկայական ծրագրեր)* 4) **կրթության կազմակերպման միջավայր** (շենքային պայմաններ, ուսումնական միջավայր, կրթական պաշարներ, ուսումնական գրականություն) 5) **ուսումնառության գնահատված արդյունքներ** (սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) գնահատում,հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին սովորողների համապատասխանության ստուգում՝ պետական ամփոփիչ ատեստավորում) 6) **կառավարում** (կառավարման խորհուրդ, տնօրեն)

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման ու անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներով՝ տեսչական մարմինը ստուգումներ է իրականացնում ՀՀ կառավարության հաստատած ստուգաթերթերով, որոնք ընդգրկում են ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների սպառիչ ցանկը՝ համապատասխան կշռային միավորներով:

Միայն օրենսդրության պահանջների խախտումների արձանագրումը և ըստ ստուգաթերթերի իրականացվող ռիսկայնության գնահատումը, սակայն, հնարավորություն չեն տալիս ամբողջական ու հստակ պատկերացում կազմել կրթության որակի և ոլորտում առկա խնդիրների մասին:

«Տեսչական մարմինների մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքները չեն կարգավորում կրթության բնագավառի առանձնահատկություններից բխող հարաբերություններն ու գործառույթները, ինչպես նաև ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները և դրանց իրականացման միասնական կարգը:

Տեսչական մարմնի նպատակը ոչ միայն կրթության բնագավառի օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է, այլև կրթության որակի բարձրացումը և կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն աջակցումը, ինչը պահանջում է տվյալ ոլորտին յուրահատուկ գործիքակազմի և վերահսկողական հիմնավորված ընթացակարգերի (ստուգում, ուսումնասիրություն, մշտադիտարկում) առկայություն, կրթության ոլորտի խորքային խնդիրների բացահայտում, կրթության որակի բարելավմանը խոչընդոտող հանգամանքների և զարգացման ուղիների որոնում:

Կրթության ոլորտի նկատմամբ վերահսկողությունը կարգավորող ՀՀ օրենսդրության թերությունների բացահայտման, կրթության ոլորտի հաշվետվողականության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ապահովել ոլորտի վերահսկողությունը կարգավորող օրենսդրական հիմքերի առկայությունը՝ հաշվի առնելով ոլորտի բոլոր առանձնահատկությունները:

III. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակը բխում է տեսչական մարմնի նպատակներից և խնդիրներից:

Տեսչական մարմնի նպատակն է՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում (վերահսկողության ոլորտ) օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը, կրթության որակի բարձրացումը և կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն աջակցումը:

Տեսչական մարմնի խնդիրներն են՝ վերահսկողության ոլորտում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև նշված ոլորտներում կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտում տիրող առկա վիճակը, տեսչական մարմնիև Կրթության պետական տեսչության նախորդ և ընթացիկ տարիներին իրականացրած վերահսկողական գործառույթների արդյունքում կուտակված տեղեկատվությունը և ռիսկերի գնահատման բազայի թարմացված տվյալները՝ սահմանվել է տեսչական մարմնի 2019 թվականի տարեկան գործունեության ծրագրի նպատակը:

Տեսչական մարմնի 2019 թվականի տարեկան գործունեության ծրագրի նպատակը կրթության որակի բարձրացմանը և հաշվետվողականությանը նպաստող արդյունավետ գործիքակազմ ունենալն է:

IV. Ծրագրի նպատակից բխող խնդիրներն ըստ ոլորտների

Ստորև ներկայացված են տեսչական մարմնի 2019 թվականի գործունեության ծրագրի նպատակից բխող խնդիրներն ըստ ոլորտների՝

Նախադպրոցական կրթության ոլորտ	*Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտ*	*Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներ*
➢ երեխայի կյանքին, առողջության պահպանմանը, ներդաշնակ ու համակողմանի զարգացմանը նպաստող միջավայր ➢ որակյալ ուսուցում և դաստիարակություն, մատչելիկրթություն	➢ ավելի որակյալ ուսուցման և ուսումնառության մակարդակ ➢ ուսումնական հաստատության աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպում և կառավարում	➢ պարտադիր միջնակարգ կրթության ապահովում ➢ ուսումնական հաստատության աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպում և կառավարում

V. Ծրագրի խնդիրներից բխող միջանկյալ արդյունքներն ըստ թիրախների

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ծրագրի խնդիրներիցբխող միջանկյալ արդյունքներն՝ ըստ թիրախների.

ՈԼՈՐՏԸ	Միջանկյալ արդյունք 1	Միջանկյալ արդյունք 2
ԴԿՍՏԵՍԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ	**Տեսչական մարմնի 2019թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ՆՈՒՀ-երն ունեն համապատասխան պատկերացում երեխայի կյանքի, առողջության պահպանմանը և ամրապնդմանը, ներդաշնակ ու համակողմանի զարգացմանը նպաստող միջավայր ստեղծելու և ապահովելու ուղղությամբ** ***<u>Թիրախներ՝</u>*** *գերբեռնված խմբեր, տարատարիք խմբերում 3 և ավելի տարիքային խմբերի առկայություն, տարբերակված, մատչելի ուսուցում չիրականացնելը, զարգացնող միջավայրի բացակայություն* ***<u>Հիմնավորում՝</u>*** *Գերբեռնված խմբեր առկա են ՀՀ ՆՈՒՀ-երի գրեթե 50%-ում (ըստ սահմանված նորմատիվների՝ միջին և ավագ խմբերում երեխաների թիվը չպետք է գերազանցի 30-ը, կրտսեր խմբում՝ 20-ը): Խմբերում աշխատում են մեկական դաստիարակներ, իսկ մեկ խմբում 30-ից ավել թվով երեխաների առկայության դեպքում երեխայի կյանքի, առողջության պահպանման, համակողմանի զարգացմանը նպաստող միջավայր ստեղծելը ռիսկային է:* *Տարատարիք (մի խմբում առկա են երկու կամ ավելի տարիքային խմբերի երեխաներ) խմբերում հիմնականում տարբերակված (տարիքային հենքին համապատասխան) ուսուցում չի իրականացվում, որը խոչընդոտում է երեխաների համակողմանի զարգացմանը նպաստող միջավայր ստեղծելուն:*	**Տեսչական մարմնի 2019թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ՆՈՒՀ-երն ունեն ավելի լավ պայմաններ որակյալ ուսուցում և դաստիարակություն ապահովելու համար** ***<u>Թիրախներ՝</u>*** *համապատասխան որակավորում չունեցող մանկավարժական համակազմ, մանկավարժական աշխատողների՝ սահմանված նորմատիվից պակաս հաստիքային միավորների քանակ)* ***<u>Հիմնավորում՝</u>*** *Համապատասխան որակավորում ունեցող մանկավարժական համակազմ ունենալը ՆՈՒՀ-ում որակյալ ուսուցում և դաստիարակություն ապահովելու կարևոր նախապայմաններից է, քանի որ նախադպրոցական տարիքի երեխայի համար նախադպրոցական կրթության պետական չափորոշչում ներառված երեխայի զարգացածության, կրթադաստիարակչական մակարդակը սահմանող համապատասխան նորմերի և դրույթների ապահովումը լավագույնս հնարավոր է միայն այդպիսի կադրերի միջոցով:* *Սահմանված նորմատիվից պակաս հաստիքային միավորների առկայությունը ՆՈՒՀ-երում (ՆՈՒՀ-երի 90%-ի մոտ) հիմնականում արտահայտվում է մեթոդիստի, ֆիզկուլտուրայի հրահանգչի, դաստիարակների պակաս հաստիքային միավորների քանակով, մինչդեռ նրանցից յուրաքանչյուրն իր մասով (համաձայն պաշտոնի նկարագրի) պատասխանատու է երեխայի որակյալ ուսուցման և դաստիարակության (ֆիզիկական) համար:*

ՈԼՈՐՏԸ	Միջանկյալ արդյունք 1	Միջանկյալ արդյունք 2
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ	**Տեսչական մարմնի 2019թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված հանրակրթական ուսումնական հաստատություններն (դպրոցները) ունեն համապատասխան պատկերացում ավելի որակյալ ուսուցում և ուսումնառություն իրականացնելու ուղղությամբ** ***<u>Թիրախներ</u>՝*** *մնացորդային գիտելիքների մակարդակ, սովորողների, ծնողների կողմից կրթական գործընթացի գնահատում, ներառականություն* ***<u>Հիմնավորում՝</u>*** *Սովորողների մոտ մնացորդային գիտելիքների (մնացորդային գիտելիքներ են համարվում այն գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, որոնք պահպանվել են սովորողի մոտ նախորդ դասարանի կրթական ծրագիրը հաջողությամբ հաղթահարելուց հետո) մակարդակը ուսումնական հաստատություններում ստուգվում են նախորդ դասարանի անցած նյութին համապատասխան. լեզուների դեպքումտրվում է թելադրություն, ճշգրիտ գիտությունների դեպքում՝ 4-5-ական առաջադրանքներ): 2018թ-ին ՀՀ Վայոց ձորի մարզում իրականացված թվով 15 դպրոցների ստուգումների արդյունքնում նշված «Հայոց լեզու» առարկայի գրավոր աշխատանքին մասնակցած թվով 90 1աշակերտներից «գերազանց» ենգնահատվել 73-ը (8%), «լավ»՝ 197-ը (22%), «բավարար»՝ 227-ը (25%), «անբավարար»՝ 404-ը (45%), «Ռուսաց լեզու» առարկայի գրավոր աշխատանքին մասնակցած թվով 883 աշակերտներից «գերազանց» ենգնահատվել 10-ը (1%), «լավ»՝ 62-ը (7%), «բավարար»՝ 214-ը (24%), «անբավարար»՝ 597-ը (68%),«Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքին մասնակցած թվով 888 աշակերտներից «գերազանց» ենգնահատվել 28-ը (3%), «լավ»՝ 80-ը (9%), «բավարար»՝ 261-ը (29%), «անբավարար»՝ 519-ը (58%): Սովորողներին, ծնողներին իրենց պարտականությունների և իրավունքների մասին իրազեկելը, ապա սովորողների ծնողների կողմից ստուգումների ընթացքում լրացված հարցաթերթերի և Dasaran կրթական ծրագրի միջոցով իրականացվելիք կրթական գործընթացի գնահատման (համաձայն նախապես մշակված գնահատման թերթիկի) արդյունքների համադրումը հնարավորություն կտան կրթության որակի բարձրցմանն ուղղված հետագա քայլերի և տեսչականմարմնիիրականացված միջոցառումների ազդեցության մասին պատկերացում կազմել: Ներառականություն՝ յուրաքանչյուր սովորողի ներառումը կրթության կազմակերպման գործընթացում:*	**Տեսչականմարմնի 2019թ. ստուգումների տարեկանծրագրում ներառված դպրոցները ունեն համապատասխան կարողություններ ավելի արդյունավետ կառավարում և կրթական գործընթաց իրականացնելու համար** ***<u>Թիրախներ</u>՝*** *համապատասխան որակավորում և պատրաստվածություն չունեցող մանկավարժական և վարչական համակազմ, որակյալ ուսուցման ապահովում՝ մեթոդների, համապատասխան ուսումնական պլանների, կրթական չափորոշիչների և ծրագրերի միջոցով, կրթության որակի բարձրացմանն ուղղված քայլերն հաստատության զարգացման ծրագրում, կառավարման խորհրդի, տնօրենի գործառույթներն այս համատեքստում* ***<u>Հիմնավորում՝</u>*** *Մանկավարժի և վարչական աշխատողի համապատասխան որակավորում ունենալը ենթադրում է, որ անձի **մասնագիտական գիտելիքները**, կարողություններն ու հմտությունները հնարավորություն կտան սահմանված կարգով իրականացնել պաշտոնի նկարագրով նախատեսված պաշտոնային պարտականությունները:* *Թիրախ ընտրելով կրթության որակի բարձրացմանն ուղղված քայլերն հաստատության զարգացման ծրագրում նպատակ ունենք պարզելու* *ա) կրթության որակի բաղադրիչի առկայությունն զարգացման ծրագրում,* *բ) զարգացմանն ուղղված քայլերի համապատասխանությունն իրականության հետ,* *գ)կառավարման խորհրդի գործառույթներն այս համատեքստում, քանի որ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջի համաձայն. «Կառավարման խորհուրդը վերահսկում է զարգացման ծրագրի կատարումը»:*

ՈԼՈՐՏԸ	Միջանկյալ արդյունք 1	Միջանկյալ արդյունք 2
ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	**Տեսչական մարմնի 2019թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ուսումնական հաստատություններում (ուսումնարաններ, քոլեջներ) ապահովված է սովորողների պարտադիր ուսումնառության պայմանը** ***<u>Թիրախներ</u>՝*** *միջնակարգ կրթության պարտադիր լինելու պահանջի ապահովում* ***<u>Հիմնավորում՝</u>*** *Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի՝ միջնակարգ կրթությունը ՀՀ-ում պարտադիր է, մինչդեռ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների համար այս պահանջի ապահովումը գործող օրենսդրությունը չի կարգավորում:*	**Տեսչական մարմնի 2019թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ուսումնական հաստատություններն ունեն համապատասխան կարողություններ առավել արդյունավետ կառավարում և կրթական գործընթաց իրականացնելու համար** ***<u>Թիրախներ՝</u>*** *համապատասխան որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական և վարչական համակազմ, որակյալ ուսուցման ապահովում՝ մեթոդների, ուսումնական պլանների, կրթական չափորոշիչների և ծրագրերի միջոցով, խորհրդիևտնօրենի գործառույթներն որակի ապահովման գործընթացում* ***<u>Հիմնավորում՝</u>*** *Մանկավարժական և վարչական աշխատողների՝ համապատասխան որակավորում ունենալը ենթադրում է, որ անձի* ***մասնագիտական գիտելիքները****, կարողություններն ու հմտությունները հնարավորություն կտան սահմանված կարգով իրականացնել պաշտոնի նկարագրով նախատեսված պաշտոնային պարտականությունները: Կառավարման խորհրդի և գործադիր մարմնի՝ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրությանը համապատասխան գործունեությունը կապահովի արդյունավետ կառավարում և ղեկավարում:*

VI. Նախադպրոցական կրթության ոլորտի խնդիրներից բխող գործողություններն ըստ միջանկյալ արդյունքների

Ստորև ներկայացված են Նախադպրոցական կրթության ոլորտի խնդիրներից բխող գործողությունները, թիրախներն ըստ փաստացի տվյալների և ակնկալվող արդյունքները (Միջանկյալ արդյունք 1, Միջանկյալ արդյունք 2).

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	
Միջանկյալ արդյունք 1	**Միջանկյալ արդյունք 2**
Տեսչական մարմնի 2019թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ՆՈՒՀ-երն ունեն համապատասխան պատկերացում երեխայի կյանքի, առողջության պահպանմանը և ամրապնդմանը, ներդաշնակ ու համակողմանի զարգացմանը նպաստող միջավայր ստեղծելու և ապահովելու ուղղությամբ ***Թիրախներ՝*** *գերբեռնված խմբեր, տարատարիք խմբերում 3 և ավելի տարիքային խմբերի առկայություն, տարբերակված, մատչելի ուսուցում չիրականացնելը, զարգացնող միջավայրի բացակայություն*	**Տեսչական մարմնի 2019թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ՆՈՒՀ-երն ունեն ավելի լավ պայմաններ որակյալ ուսուցում և դաստիարակություն ապահովելու համար** ***Թիրախներ՝*** *համապատասխան որակավորում ունեցող մանկավարժական համակազմ, մանկավարժական աշխատողների՝ սահմանված նորմատիվից պակաս հաստիքային միավորների քանակ*

Միջանկյալ արդյունք 1. ***Տեսչական մարմնի 2019թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ՆՈՒՀ-երն ունեն համապատասխան պատկերացում երեխայի կյանքի, առողջության պահպանմանը և ամրապնդմանը, ներդաշնակ ու համակողմանի զարգացմանը նպաստող միջավայր ստեղծելու և ապահովելու ուղղությամբ***				
Գործողություն	**Գործընթացի ցուցանիշ (ելակետ, թիրախ)**	**Ժամանակա-հատվածը**	**Պատասխանատու կատարող ------- Համակատարող**	**Ակնկալվող արդյունք**
1. Հանդիպում-կլոր սեղան քննարկումներ՝ ՆՈՒՀ-երի խմբերում առավելագույն թույլատրելի քանակի, տարատարիք խմբերի կարգավորումների վերաբերյալ **2. ՆՈՒՀ-երում իրականացված քննարկումների և հատկորոշված խնդիրների լուծման ուղիների քննարկում Երևանի և մարզային համայնքների կրթության ոլորտների պատասխանատուների հետ**	Օրենսդրության պահանջների խախտումներ (155-ում (22%) առկաեն 10%-ից ավել գերբեռնվածության մակարդակ (սահմանված քանակից ավելի սովորողների տոկոսը) ունեցողխմբեր, 180-ում (26%) նշված մակարդակը մինչև 10% է 2) 66-ում (10%) առկա են 2 և ավելի թվով տարատարիք խմբեր, 84-ում (12%) առկա են 1-ական տարատարիք խմբեր (ներառված չեն այն ՆՈՒՀ-երը, որոնք ունեն ընդամենը 1 խումբ, որը տարատարիք է) 3) հիմնականում տարատարիք խմբերում ըստ տարիքային խմբերի տարբերակված ուսուցում չի իրականացվում, մինչդեռ ՆՈՒՀ-երից 58-ի (8%) տարատարիք խմբերում տարիքային խմբերի թիվը 3 և ավելի է) Հրապարակայնության, թափանցիկության ապահովում	Առնվազն երեք հանդիպում I կիսամյակում	ՀՎ[3] ------- ՌԳՍՊՎԳՎ[2] ԻԱՓՎ[5] ՀՏԱԲ[6]	Զեկույց, տեղեկանք,առաջարկություններ, հաշվետվություն (տարեկան հաշվետվության մեջ խնդիրների վերաբերյալ տվյալների ներկայացում կամ դրանց բացակայության հիմնավորում) Զեկույց և առաջարկությունների փաթեթներկայացում ԿԳՆ-ին (ըստ անհրաժեշտության) Իրականացված միջոցառումների լուսաբանում կայքի միջոցով

3. Կանխարգելիչ միջոցառումներ ՆՈՒՀ-երի տնօրենների, համայնքապետարանների աշխատակազմերի կրթության ստորաբաժանումների աշխատակիցների հետ	Օրենսդրության պահանջների խախտումներ Հրապարակայնության, թափանցիկության ապահովում	Առնվազն երեք հանդիպում I կիսամյակում	ՀՎ ------- ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ ՀՏԱԲ	Ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների և կարգադրագրերի համաձայն տրված հանձնարարականների թվերի դրական տարբերություն՝ խախտումների հետևանքների վերացման հաշվին (առնվազն 10%): Իրականացված միջոցառումների լուսաբանում կայքի միջոցով
4. Ուսումնա-դաստիարակչական գործունեության գնահատման ձևաթղթի մշակում	Անհրաժեշտ գործիքակազմի բացակայություն	I եռամսյակ	ՌԳՍՊՎԳՎ ------- ՀՎ ԻԱՓՎ	Ձևաթղթի նախագիծ
5. Ուսումնա-դաստիարակչական գործունեության գնահատման ձևաթղթի փորձարկում ստուգումների ընթացքում	Գործիքակազմի լրամշակում, ճշգրտում	II-III եռամսյակներ	ՀՎ ------- ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	Արդյունքների համադրում, վերլուծություն
6. Զարգացնող միջավայրի ստուգում՝ ըստ համապատասխան ստուգաթերթի, ռիսկայնության գնահատում	Ստուգումների ժամանակացույց	Ըստ ԿՏՄ[1] ժամանակա-ցույցի	ՀՎ ------- ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	Ակտ, ռիսկերի վերագնահատում

Միջանկյալ արդյունք 2. ***Տեսչական մարմնի 2019թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ՆՈՒՀ-երն ունեն ավելի լավ պայմաններ որակյալ ուսուցում և դաստիարակություն ապահովելու համար***				
Գործողություն	**Գործընթացի ցուցանիշ (ելակետ, թիրախ)**	**Ժամանակա-հատվածը**	**Պատասխանատու կատարող -------- Համակատարող**	**Ակնկալվող արդյունք**
1. Ստուգումներ ՆՈՒՀ-երում	1) 155-ում (22%) առկաեն 10%-ից ավել գերբեռնվածության մակարդակ (սահմանված քանակից ավելի սովորողների տոկոսը) ունեցողխմբեր, 180-ում (26%) նշված մակարդակը մինչև 10% է 2) 66-ում (10%) առկա են 2 և ավելի թվով տարատարիք խմբեր, 84-ում (12%) առկա են 1-ական տարատարիք խմբեր (ներառված չեն այն ՆՈՒՀ-երը, որոնք ունեն ընդամենը 1 խումբ, որը տարատարիք է) 3) հիմնականում տարատարիք խմբերում ըստտարիքային խմբերի տարբերակված ուսուցում չի իրականացվում, մինչդեռ ՆՈՒՀ-երից 58-ի (8%) տարատարիք խմբերում տարիքային խմբերի թիվը 3 և ավելի է 4) մանկավարժական աշխատողների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմատիվից պակաս հաստիքային միավորների քանակը 1-ից ավելի է 215-ում (30%), մինչև 1 միավոր է 421-ում (60%): Ստուգված ՆՈՒՀ-երից 292-ում հայտնաբերվել են նաև այլ բնույթի խախտումներ (կադրային, չափորոշիչների պահանջների և այլն)	Ըստ ստուգումների տարեկան ծրագրի	ՀՎ -------- ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	1) Ակտ, կարգադրագիր (հանձնարարականներ), գրություններ լիազորված մարմիններին 2) Հաստատություններից ստացված կատարողականների և տրված հանձնարարականների համադրման արդյունքում առնվազն 50% հանձնարարականների կատարում 3) Լիազոր մարմիններից ստացված գրությունների թվի (հետադարձ կապի) աճ 4) Ըստ անհրաժեշտության՝ կիրառված պատասխանատվության միջոցներ

2. Համայնքապետարանի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումում իրականացվող վերահսկողական գործընթացի ձևաթղթի մշակում	Ամբողջական տվյալների ստացում	I եռամսյակ	ՀՎ ------- ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	Ձևաթղթի նախագիծ
3. Ձևաթղթի փորձարկում ՀՀ Արարատի մարզի Մասիսի, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանների աշխատակազմերի կրթության ստորաբաժանումներում	Ձևաթղթի մշակում	II-III եռամսյակներ	ՀՎ ------- ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	Ձևաթուղթ
4. Ռիսկերի գնահատում	Բարձր ռիսկային խմբի թվով 18 ՆՈՒՀ, Միջին ռիսկային խմբի թվով 15 ՆՈՒՀ, Ցածր ռիսկային խմբի թվով 3 ՆՈՒՀ	Ստուգման ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում	ՌԳՍՊՎԳՎ	1) Ռիսկերի վերագնահատում՝ թարմացված ռիսկերի գնահատման տվյալների բազա 2) Վերլուծությունների ներկայացում եռամսյակային կամ տարեկան հաշվետվություններում, ըստ անհրաժեշտության՝ առաջարկությունների ներկայացում համապատասխան մարմիններին 3) Ոլորտային ռիսկերի վերագնահատում նոր ուսումնական տարվա սկզբում (սեպտեմբեր-հոկտեմբեր)

5. Հետադարձ կապ (դիտարկումներ)	ՆՈՒՀ-երից ստացված կատարողականների համապատասխանություն տրված հանձնարարականների և դիտարկման (ըստ առկայության) արդյունքների հետ	Յուրաքանչյուր եռամսյակ	ՌԳՍՊՎԳՎ	1) Հանձնարարականների, կատարողականների և դիտարկման (ըստառկայության) արդյունքների վերլուծություն 2) Դիտարկումների արդյունքների և ներկայացված կատարողականների համադրման արդյունքների անհամապատասխանության դեպքում՝ գրությունների ներկայացում համապատասխան մարմիններին (համայնքապետեր, ՀՀ ԿԳ նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն), պատասխանատվության միջոցների կիրառման առաջարկությունների, անհրաժեշտության դեպքում՝ կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների փոփոխությունների վերաբերյալ առաջարկների ներկայացում
6. Դիմում բողոքներին արձագանքում և արդյունքների ամփոփում	ՆՈՒՀ-երի վերաբերյալ դիմում-բողոքի առկայություն	Ըստ անհրաժեշտության	ՀՎ ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	Հաշվետվության ներկայացում առնվազն յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 20 օրյա ժամկետում (դիմում-բողոքների վերաբերյալ քանակական տվյալների ներկայացում ըստ տարիների, ամիսների: Անդրադարձ բարձրացված հարցերի բնույթներին, ԿՏՄ ձեռնարկած միջոցառումներին, լիազոր մարմինների կողմից իրականացրած պատասխանատվության միջոցներին):

VII. Հանրակրթության ոլորտի խնդիրներից բխող գործողություններն ըստ միջանկյալ արդյունքների

Ստորև ներկայացված են Հանրակրթության ոլորտի խնդիրներից բխող գործողությունները, թիրախներն ըստ փաստացի տվյալների և ակնկալվող արդյունքները (Միջանկյալ արդյունք 1, Միջանկյալ արդյունք 2).

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ	
Միջանկյալ արդյունք 1	**Միջանկյալ արդյունք 2**
Տեսչական մարմնի 2019թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված հանրակրթական ուսումնական հաստատություններն (դպրոցները) ունեն համապատասխան պատկերացում ավելի որակյալ ուսուցում և ուսումնառություն իրականացնելու ուղղությամբ ***Թիրախներ՝*** *մնացորդային գիտելիքների մակարդակ, սովորողների, ծնողների կողմից կրթական գործընթացի գնահատում, ներառականություն*	**Տեսչական մարմնի 2019թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված դպրոցները ունեն համապատասխան կարողություններ ավելի արդյունավետ կառավարում և կրթական գործընթաց իրականացնելու համար** ***Թիրախներ՝*** *համապատասխան որակավորում և պատրաստվածություն չունեցող մանկավարժական և վարչական համակազմ, որակյալ ուսուցման ապահովում՝ մեթոդների, համապատասխան ուսումնական պլանների, կրթական չափորոշիչների և ծրագրերի միջոցով, կրթության որակի բարձրացմանն ուղղված քայլերն հաստատության զարգացման ծրագրում, կառավարման խորհրդի, տնօրենի գործառույթներն այս համատեքստում*

Միջանկյալ արդյունք 1. Տեսչական մարմնի 2019թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված հանրակրթական ուսումնական հաստատություններն (դպրոցները) ունեն համապատասխան պատկերացում ավելի որակյալ ուսուցում և ուսումնառություն իրականացնելու ուղղությամբ				
Գործողություն	**Գործընթացի ցուցանիշ (ելակետ, թիրախ)**	**Ժամանակա-հատվածը**	**Պատասխանատու կատարող -------- Համակատարող**	**Ակնկալվող արդյունք**
1. Հանդիպումներ (իրազեկում) ոչ միայն ծնողական խորհուրդների անդամների, այլև պարզ պատահականության ընտրանքով ընտրված ծնողների խմբերի հետ	Ծնողների տեղեկացվածության պակաս	Առնվազն 3 հանդիպումներ II և IV եռամսյակ-ներում	ՀՎ -------- ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	Հաշվետվողականության բարձրացված մակարդակ Դպրոցում կատարված ստուգման ընթացքում ծնողների կողմից լրացված անանուն հարցաթերթիկների պատասխանների, ներկայացված առաջարկների վերլուծական տվյալներ
2. Հանդիպումներ պատահական ընտրանքով ընտրված աշակերտների խմբերի հետ, քննարկումների իրականացում՝ ուղղված դպրոցի գործունեության գնահատմանը	Սովորողների տեղեկացվածության պակաս	Առնվազն 3 հանդիպումներ II և IV եռամսյակ-ներում	ՀՎ -------- ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	

3. Ծնողների հարցաթերթի մշակում և փորձարկում	Գնահատման գործիքակազմի բացակայություն	Հունվար	ՀՎ ՌԳՍՊՎԳՎ -------- dasaran.am	Դպրոցում կատարված ստուգման ընթացքում ծնողների կողմից լրացված անանուն հարցաթերթիկների պատասխանների, ներկայացված առաջարկների վերլուծական տվյալների համադրում dasaran.am-ի միջոցով կիսամյակային կամ տարեկան պարբերականությամբ ծնողների հետ իրականացվող հարցախույզի արդյունքների հետ (10 միավորային սանդղակով բավարարվածության մակարդակը 5 միավորից բարձր գնահատողների տոկոսային աճ) Հաշվետվողականության բարձրացված մակարդակ

4. Խորհրդատվական գործառույթներ հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների հետ մինչ վերահսկողական գործառույթների իրականացումը	Օրենսդրության պահանջների խախտումներ	ԸստԿՏՄ ժամանակացույցի	ՀՎ ------- ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	Ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների և կարգադրագրերի համաձայն տրված հանձնարարականների թվերի դրական տարբերություն՝ խախտումների հետևանքների վերացման հաշվին (առնվազն 10%) Հաշվետվողականության բարձրացված մակարդակ
5. Քննարկումների, ուսումնասիրությունների շարք շահագրգիռ բոլոր կողմերի հետ ուսուցչի պաշտոնի համապատասխանության ավելի արդյունավետ կարգավորում ունենալու ուղղությամբ	Իրավական դաշտի կարգավորում	Առնվազն երեք հանդիպում II և III եռամսյակ-ներում	ՀՎ ------- ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	Հանդիպումների շարք, փորձագիտական քննարկումներ/հարցազրույցների, միջազգային հաջողված փորձի ուսումնասիրություն Զեկույց, առաջարկություններ ԿԳՆ-ին (IV եռամսյակ)

6. Դասալսման ձևաթղթի լրամշակում և փորձարկում «Դասավանդիր Հայաստան»-ի հետ	Գործիքակազմի լրամշակում	I եռամսյակ	ՀՎ ------- ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	Համատեղ աշխատանքային խումբ, աշխատանքային խմբի հանդիպումներ, առնվազն 5 դպրոցում փորձարկում «Դասավանդիր Հայաստան»-ի ներկայացուցիչների հետ, Դասալսման լրամշակված ձևաթուղթ և որակական գնահատման ռուբրիկ
7. Ուսումնական հաստատություններին վերաբերող տվյալների հավաքագրում և վերլուծական բազայի ստեղծում Դասարան կրթական ծրագրի հետ համատեղ	ԿՏՄ-Դասարան հուշագրի, անհրաժեշտ տվյալների ձևակերպում	I կիսամյակ	ԿՏՄ ղեկավարություն ------- ՌԳՍՊՎԳՎ	Տվյալների բազա

8.Պատահական այցեր դպրոցներ՝ դասալսումների նպատակով գործընկեր կառույցների (ԿԳՆ, ԿԱԻ, «Դասավանդիր Հայաստան» և այլ) հետ համատեղ	Առնվազն 3 այցելություն, առարկաների և տարիքային խմբերի ընտրություն	Ուսումնական տարվա ընթացքում	ԿՏՄ, գործընկերներ	Միջանկյալ հաշվետվություն, առաջարկություններ լիազոր մարմիններին
9.Կրթության որակի բաղադրիչների գնահատման չափանիշների մշակում	Գնահատման չափանիշների և գործիքակազմի բացակայություն	I կիսամյակ	ՌԳՍՊՎԳՎ ------- ՀՎ	Փորձարկման ենթակա գնահատման գործիքակազմ
10. Կրթության որակի գնահատման ձևաթղթի փորձարկում առնվազն 5 ուսումնական հաստատություններում	Որակի գնահատման գործիքակազմի նախագիծ	II կիսամյակ	ՌԳՍՊՎԳՎ ------- ՀՎ	Լրամշակված գործիքակազմ
11. Սովորողների մնացորդային գիտելիքների մակարդակի ստուգման համար անհրաժեշտ գրավոր աշխատանքների (բնական գիտություններ՝ առաջադրանքներ, լեզուներ՝ թելադրություններ) բազայի ստեղծում	Միասնական բազայի բացակայություն	IIեռամսյակ	ՌԳՍՊՎԳՎ ------- ԳԹԿ	Առաջադրանքների բազա

Միջանկյալ արդյունք 2. Տեսչական մարմնի 2019թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված դպրոցները ունեն համապատասխան կարողություններ ավելի արդյունավետ կառավարում և կրթական գործընթաց իրականացնելու համար				
Գործողություն	**Գործընթացի ցուցանիշ (ելակետ, թիրախ)**	**Ժամանակա-հատվածը**	**Պատասխանատու կատարող ------- Համակատարող**	**Ակնկալվող արդյունք**
1. Ստուգումներ ՀՀ դպրոցներում	Թիրախներ ըստ ռիսկերի գնահատման բազայիտվյալների՝ 1)ուսումնական հաստատության հերթայնություն 2)ուսումնական հաստատությունում չդասավանդվող առարկայի առկայություն. 3)ուսումնական հաստատությունում գերբեռնված դասարանների առկայություն 4)վերջին երեք տարիների ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված՝ մանկավարժական աշխատողների նշանակումներին (ներառյալ ընթացակարգը) վերաբերող խախտումների թիվ 5) վերջին երեք տարիների ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված այլ խախտումների թիվ	Համաձայն ստուգումների ժամանակա-ցույցի	ՀՎ ------- ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	1) Ակտ, կարգադրագիր, գրություններ լիազորված մարմիններին, վերլուծություն (համաձայնքանակական, որակականբնութագրիչների) 2) Հաստատություններից ստացված կատարողականների և հանձնարարականների համադրման արդյունքում առնվազն 50% հանձնարարականների կատարում 3) Լիազոր մարմիններից ստացված գրությունների թվի աճ 4) Ըստ անհրաժեշտության՝ կիրառված պատասխանատվության միջոցներ 5) Հաշվետվողականության բարձրացված մակարդակ
2. Մարզպետարանի աշխատակազմի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումում իրականացվող վերահսկողական գործառույթի համար նախատեսվող ձևաթղթի մշակում	Ամբողջական տվյալների ստացում	I եռամսյակ	ՀՎ ------- ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	Ձևաթղթի նախագիծ

3. Ձևաթղթի փորձարկում ՀՀ Լոռու և Արագածոտնի մարզպետարանների աշխատակազմերի կրթության ստորաբաժանումներում	2018թ. իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում ՀՀ **Վայոց ձորիմարզում** հայտնաբերվել են ուսումնական պլանների թվով 48 խախտումներ 45 դպրոցներից 27-ում (60%), կադրային նշանակումներին վերաբերող թվով 173 խախտումներ 42-ում (93%), ՀՀ **Կոտայքի մարզում՝** ուսումնական պլանների թվով 54 խախտումներ 90 դպրոցներից 43-ում (48%), կադրային նշանակումներին վերաբերող թվով 226 խախտումներ՝ 75-ում (83%)	II-III եռամսյակներ	ՀԿ ------- ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	Լրամշակված ձևաթուղթ, տեղեկանք

4. **Դպրոցի զարգացման ծրագրի մշտադիտարկման գործիքակազմի մշակում և փորձարկում (անհրաժեշտության դիպքում իրավական հիմքերի նախապատրաստում)**	Իրավական հիմքեր, գործիքակազմի նախագիծ և փորձարկում առնվազն 5 դպրոցներում	I կիսամյակ (մշակում), II կիսամյակ (փորձարկում)	ՀԿ ------- ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	Զարգացման ծրագրի մշտադիտարկման գործիքակազմի հաստատված նախագիծ Հաշվետվողականության բարձրացված մակարդակ
5. Ռիսկերի գնահատում	Բարձր ռիսկային խմբի թվով 31 դպրոցներ, միջին ռիսկային խմբի թվով 3 դպրոցներ	Ստուգման ավարտից հետո 10-օրյա ժամկետում	ՌԳՍՊՎԳՎ	1) Ռիսկերի վերագնահատում՝ թարմացված ռիսկերի գնահատման տվյալների բազա 2) Վերլուծությունների ներկայացում եռամսյակային կամ տարեկան հաշվետվությունում, ըստ անհրաժեշտության առաջարկությունների ներկայացում համապատասխան մարմիններին 3) Ոլորտային ռիսկերի վերագնահատում ուսումնական տարվա սկզբում (սեպտեմբեր-հոկտեմբեր)

6. Հետադարձ կապ (դիտարկումներ)	Դպրոցներից ստացված կատարողականների համապատասխանություն տրված հանձնարարականներիև դիտարկման (առկայության դեպքում) արդյունքների հետ	Յուրաքանչյուր եռամսյակ	ՌԳՍՊՎԳՎ	1) Հանձնարարականների, կատարողականների և դիտարկման (առկայությանդեպքում) արդյունքների վերլուծություն 2) Դիտարկումների արդյունքների և ներկայացված կատարողականների համադրման արդյունքների անհամապատասխանության դեպքում՝ գրությունների ներկայացում համապատասխան մարմիններին (համայնքապետեր, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն), պատասխանատվության միջոցների կիրառման առաջարկությունների, անհրաժեշտության դեպքում՝ կրթության բնագավառը կարգավորող իրավական ակտերումլ բացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկների ներկայացում
7. Դիմում-բողոքներին արձագանքում և արդյունքների ամփոփում	ՀՈՒՀ-երի վերաբերյալ դիմում-բողոքի առկայություն	Ըստ անհրաժեշտության	ՌԳՍՊՎԳՎ ՀՎ	Հաշվետվության ներկայացում առնվազն յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 20 օրյա ժամկետում (դիմում-բողոքների վերաբերյալ քանակական տվյալների ներկայացում ըստ տարիների, ամիսների: Անդրադարձ բարձրացված հարցերի բնույթներին, ԿՏՄ ձեռնարկած միջոցառումներին, լիազոր մարմինների կողմից իրականացրած պատասխանատվության միջոցներին):

VIII. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությանոլորտի խնդիրներից բխող գործողություններն ըստ թիրախների

Ստորև ներկայացված են Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտների խնդիրներից բխող գործողությունները, թիրախները՝փաստացի տվյալներով, ակնկալվող արդյունքները (Միջանկյալ արդյունք 1, Միջանկյալ արդյունք 2).

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	
Միջանկյալ արդյունք 1	**Միջանկյալ արդյունք 2**
Տեսչական մարմնի 2019թ. Ստուգումների տարեկան ծրագրում ներառված ուսումնական հաստատություններում (ուսումնարաններ, քոլեջներ) ապահովված է սովորողների պարտադիր ուսումնառության պայմանը ***Թիրախներ՝*** *միջնակարգ կրթության պարտադիր լինելու պահանջի ապահովում*	**Տեսչական մարմնի 2019թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ուսումնական հաստատություններն ունեն համապատասխան կարողություններ առավել արդյունավետ կառավարում և կրթական գործընթաց իրականացնելու համար** ***Թիրախներ՝*** *համապատասխան որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական և վարչական համակազմ, որակյալ ուսուցման ապահովում՝ մեթոդների, ուսումնական պլանների, կրթական չափորոշիչների և մոդուլային ծրագրերի միջոցով, կառավարման խորհրդի և տնօրենի գործառույթներն որակի ապահովման գործընթացում*

Միջանկյալ արդյունք 1՝ **Տեսչական մարմնի 2019թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ուսումնական հաստատություններում (ուսումնարաններ, քոլեջներ) ապահովված է սովորողների պարտադիր ուսումնառության պայմանը**				
Գործողություն	**Գործընթացի ցուցանիշ (ելակետ, թիրախ)**	**Ժամանակա-հատվածը**	**Պատասխանատու կատարող ------- Համակատարող**	**Ակնկալվող արդյունք**
Սովորողների շարժի ստուգում	Սովորողների պարտադիր միջնակարգ կրթության պահանջ	Ըստ ժամանակացույցի	ՆՄՄԿՎ[4] ------- ՌԳՍՊՎԳՎ, ԻԱՓՎ	Ակտ, ռիսկերի վերագնահատում, իրավական դաշտի կարգավորման առաջարկի ներկայացում ԿԳՆ (ըստ անհրաժեշտության)

Միջանկյալ արդյունք 2՝ **Տեսչական մարմնի2019թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ուսումնական հաստատություններն ունեն համապատասխան կարողություններ առավել արդյունավետ կառավարում և կրթական գործընթաց իրականացնելու համար**				
Գործողություն	**Գործընթացի ցուցանիշ (ելակետ, թիրախ)**	**Ժամանակա-հատվածը**	**Պատասխանատու կատարող ------- Համակատարող**	**Ակնկալվող արդյունք**
1.Խորհրդատվական գործառույթներ ուսումնական հաստատությունների տնօրենների հետ մինչև վերահսկողական գործառույթների իրականացումը	Օրենսդրության պահանջների խախտումներ Հրապարակայնության, թափանցիկության ապահովում	Ըստ ժամանակացույցի	ՆՄՄԿՎ ------- ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ ՀՏԱԲ	Ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների և համաձայն կարգադրագրերի տրված հանձնարարականների թվերի դրական տարբերություն՝ խախտումների հետևանքների ուղղման հաշվին (առնվազն 10%) Իրականացված միջոցառումների լուսաբանում կայքի միջոցով
2. Ստուգումներ ՀՀ նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում	Ռիսկերի գնահատման բազա՝ 1)ուսումնական հաստատության սովորողների թիվ 2)ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների շարժ 3)ուսումնական հաստատությունից հանրակրթական ուսումնական հաստատություն տեղափոխված սովորողների թիվ 4)ուսումնական հաստատության կողմից պետական լիազորված մարմնի հատկացրած տեղերում 3 տարի անընդմեջ ընդունելություն չիրականացնելը	Համաձայն ստուգումների ժամանակացույցի	ՆՄՄԿՎ ------- ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	1) Ակտ, կարգադրագիր, գրություններ լիազորված մարմիններին 2) Հաստատություններից ստացված կատարողականների և հանձնարարականների համադրման արդյունքում առնվազն 50% հանձնարարականների կատարում 3) Լիազոր մարմիններից ստացված գրությունների թվի աճ 4) Ըստ անհրաժեշտության՝ կիրառված պատասխանատվության միջոցներ

3. Ռիսկերի գնահատում	Բարձր ռիսկային խմբի թվով 20 հաստատություններ,միջին ռիսկային խմբի թվով 9 հաստատություններ, ցածր ռիսկային խմբի 1 հաստատություն	Ստուգման ավարտից հետո 10-օրյա ժամկետում	ՌԳՍՊՎԳՎ	1) Ռիսկերի վերագնահատում՝ թարմացված ռիսկերի գնահատման տվյալների բազա 2) Վերլուծությունների ներկայացում եռամսյակային կամ տարեկան հաշվետվությունում, առաջարկությունների ներկայացում համապատասխան մարմիններին
4. Հետադարձ կապ (դիտարկումներ)	Ուսումնական հաստատություններից ստացված կատարողականների համապատասխանություն տրված հանձնարարականների և դիտարկման արդյունքների հետ	Յուրաքանչյուր եռամսյակ	ՌԳՍՊՎԳՎ	1) Հանձնարարականների, կատարողականների և դիտարկման արդյունքների վերլուծություն 2)Դիտարկումների արդյունքների և ներկայացված կատարողականների համադրման անհամապատասխանության դեպքում՝ գրությունների ներկայացում ՀՀ ԿԳ նախարարություն, պատասխա-նատվության միջոցների կիրառման առաջարկությունների, անհրաժեշտ. դեպքում՝ կրթության բնագավառի իրավական ակտերում լրացումներիև փոփոխությունների վերաբերյալ առաջարկների ներկայացում
5. Դիմում-բողոքներին արձագանքում և արդյունքների ամփոփում	Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների վերաբերյալ դիմում-բողոքի առկայություն	Ըստ անհրաժեշտության	ՆՄՄԿՎ ------- ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	Հաշվետվության ներկայացում առնվազն յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 20 օրյա ժամկետում (դիմում-բողոքների վերաբերյալ քանակական տվյալների ներկայացում ըստ տարիների, ամիսների: Անդրադարձ բարձրացված հարցերի բնույթներին, ԿՏՄ ձեռնարկած միջոցառումներին, լիազոր մարմինների կողմից իրականացրած պատասխանատվության միջոցներին):

IX. Հաշվետվողականություն

Հաշվետվողականություն
Միջանկյալ արդյունք
Կրթության ոլորտի հաշվետվողականության ավելի բարձր մակարդակ ոլորտի վերահսկողությունը կարգավորող օրենսդրական հիմքերի հստակեցման միջոցով ***Թիրախներ*** ՀՀ կթության ոլորտի վերահսկողությունը կարգավորող ՀՀ օրենսդրության առկա բացերի հստակեցման անհրաժեշտություն, քանի որ «Տեսչական մարմինների մասին», «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքները հնարավորություն չեն տալիս ամբողջությամբ և արդյունավետ իրականացնել կրթության ոլորտի վերահսկողական գործառույթները՝ հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները:

Միջանկյալ արդյունք՝ **Կրթության ոլորտի հաշվետվողականության ավելի բարձր մակարդակ ոլորտի վերահսկողությունը կարգավորող օրենսդրական հիմքերի հստակեցման միջոցով**				
Գործողություն	**Գործընթացի ցուցանիշ (ելակետ, թիրախ)**	**Ժամանակահատվածը**	**Պատասխանատու կատարող ------- Համակատարող**	**Ակնկալվող արդյունք**
1. Կրթության վերահսկողության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության բացերի ախտորոշում	«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենք, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ ոենք,	I-II եռամսյակներ	ԻԱՓՎ ---------- ՀՎ ՆՄՄԿՎ ՀՏԱԲ ՌԳՍՊՎԳՎ	Եզրակացություններ, գրություններ, առաջարկություններ
2. Քննարկումների շարք շահագրգիռ բոլոր կողմերի հետ (ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ, ԿԳՆ)		II-III եռամսյակներ		

3. «Կրթության բնագավառի պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգի մշակման, նախագծի մշակման հետ կապված առաջարկությունների ներկայացում և համաձայնեցում շահագրգիռ բոլոր կողմերի հետ (ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ, ԿԳՆ)	«Կրթության բնագավառի պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծ	IV եռամսյակ		

X. Տեսչական մարմնի գործունեության որակի բարձրացմանն ուղղված գործողություններ

Միջանկյալ արդյունք՝ Տեսչական մարմնի գործունեության ավելի բարձր որակական մակարդակ				
Գործողություն	**Գործընթացի ցուցանիշ (ելակետ, թիրախ)**	**Ժամանակա-հատվածը**	**Պատասխանատու կատարող ..... Համակատարող**	**Ակնկալվող արդյունք**
1. Ներքին կարգապահական կանոնների և էթիկայի կանոնների պահպանման վերաբերյալ վերլուծության ներկայացում խորհրդին	ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի «Տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների կազմակերպման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 1358-Ն որոշում ԿՏՄ ծառայողների կողմից ՀՀ օրենսդրության, տեսչական մարմնում ներքին կարգապահական կանոնների և էթիկայի կանոնների պահպանում	Յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող հերթական նիստ	ՈԱԲ[7]	Վերլուծություն
2. Տեսչական մարմնի, նրա ծառայողների գործողությունների կամ անգործության կամ նրա կողմից ընդունված իրավական ակտերի վերաբերյալ ստացված բողոքների ուսումնասիրում, թերությունների վերհանում և դրանց հիման վրա կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում խորհուրդ	ՀՀ կառավարության 2015 թ. հոկտեմբերի 1-ի «Տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների կազմակերպման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 1358-Ն որոշում ԿՏՄ գործունեության կատարելագործում	Յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող հերթական նիստ	ՈԱԲ	Առաջարկություններ

3. ԿՏՄ կայքէջում վերլուծությունների հրապարակում՝ **1) ԿՏՄ ծառայողների տրամադրած խորհրդատվության օգտակարության արձագանքների** **2) ստուգաթերթերի՝ որպես պահանջներին համապատասխանությանը նպաստող գործիքի արդյունավետության վերաբերյալ արձագանքների**	«Տեսչական մարմինների մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-254-Ն օրենք Տեսչական մարմնի գործունեության արդյունավետության բարձրացում	Պարբերաբար	ՈԱԲ ------- ՀՏԱԲ	Հրապարակայնության, թափանցիկության ապահովում
4. Ռիսկերի բացահայտման նպատակով ԿՏՄ բոլոր ստորաբաժանումներում ուսումնասիրությունների իրականացում և ԿՏՄ գործունեության արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ ներառող հաշվետվությունների կազմում	ՀՀ կառավարության 2015 թ. հոկտեմբերի 1-ի «Տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների կազմակերպման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 1358-Ն որոշում Ներքին ռիսկերի բացահայտում	Յուրաքանչյուր եռամսյակ	ՈԱԲ ------- ՀՏԱԲ	Հաշվետվություն
5. ԿՏՄ գործունեության կատարողականի գնահատման մեթոդոլոգիայի կազմում և ներկայացում խորհուրդ	«Տեսչական մարմինների մասին» 2014 թ. դեկտեմբերի 17-ի ՀՕ-254-Ն օրենք Կատարողականի գնահատման չափելիության ապահովում	Առաջին եռամսյակ	ՈԱԲ	Կատարողականի գնահատման մեթոդոլոգիա

6. Ստուգման ենթարկված սուբյեկտների բավարարվածության աստիճանի վերլուծություն՝ տեսչական մարմնի աշխատանքների անաչառության, ընթացակարգերի թափանցիկության, տրամադրված տեղեկատվության որակի և տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժության վերաբերյալ տարբեր գործիքների մշակման և կիրարկման միջոցով	«Տեսչական մարմինների մասին» 2014 թ. դեկտեմբերի 17-ի ՀՕ-254-Ն օրենք Ազդեցության գնահատում, հետադարձ կապի ապահովում	Յուրաքանչյուր եռամսյակ	ՈԱԲ ------- ՀՏԱԲ	Վերլուծություն

7. ԿՏՄ անձնակազմի կարողությունների զարգացում	«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջ	Առնվազն եռամսյակը մեկ անգամ	Կառուցվածքային ստորաբաժա-նումներ	Ավելի պատրաստված ԿՏՄ ծառայողներ

XI. Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ժամանակացույց

N	Գործողություն	Արդյունք	Ժամկետ	Կատարող/համակ ատարող	Գնահատման չափանիշ
1.	Ըստ տարեկան ծրագրի՝ կիսամյակային պլանի կազմում	Տեսչական մարմնի գործունեությունը ՁԼՄ-ների և հանրության հետ կապերի տեսանկյունից հստակեցում և համակարգում	1-ին կիսամյակը՝ գործունեության ծրագրի հաստատումից հետո 10-օրյա ժամկետում, 2-րդը՝ կիսամյակին նախորդող ամսվա մինչև 20-ը	ՀՏԱԲ	Գործողությունների պլան՝ հստակ ժամանակացույցով
2.	Ըստ տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրի՝ կրթական բնագավառում գործող ՀԿ-ների և դպրոցների տնօրենների հետ հանդիպում-	Հանրության իրազեկության մակարդակի բարձրացում իրենց իրավունքների և պարտականությունների մասին, հնարավոր խախտումների	Տարվա ընթացքում	Կառուցվածքային ստորաբաժանում-ներ	Պլանային 3 հանդիպում՝ հանդիպումների լուսաբանում տեսչական մարմնի պաշտոնական կայքում և ՁԼՄ-ներում

	քննարկումների կազմակերպում՝ պլանային և ըստ անհրաժեշտության՝ մայրաքաղաքում և մարզերում	կանխարգելում և առկա խնդիրների որոշակի կարգավորում			
3.	Ըստ տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրի՝ ստուգումների նպատակների, խնդիրների և արդյունքների լուսաբանում՝ տարբեր ձևաչափերով	Հանրության իրազեկության և տեղեկատվության մակարդակի բարձրացում իրենց իրավունքների մասին, հնարավոր խախտումների կանխարգելում	Յուրաքանչյուր եռամսյակում առնվազն 1 հարցազրույց, 2 մամուլի հաղորդագրություն, տեղեկանքների հրապարակում ստուգումների արդյունքների ամփոփումից հետո	ՀՏԱԲ	Յուրաքանչյուր եռամսյակ կատարված աշխատանքների հաշվետվություն, որը հրապարակվել և տարածվել էտեսչական մարմնի սոցիալական էջերում, ԶԼՄ-ներում, հարցազրույցներ տեսչական մարմնի ղեկավար կազմի հետ՝ տարբեր թեմաներով, տեսչական մարմնի ղեկավարի մամուլի ասուլիս, հանդիպումներ ԶԼՄ ներկայացուցիչների հետ՝ առնվազն 2 անգամ տարեկան, այլ ելույթներ և մեկնաբանություններ՝ ըստ անհրաժեշտության
4.	Տեսչական մարմնի կայքի տեղեկատվության թարմացում, անգլերեն և ռուսերեն կայք էջերի ստեղծում, կայքի նյութերի թարգմանությունների և տեղադրում երկու լեզուներով: Կայքի և սոցիալական մեդիայի էջերի բովանդակային սպասարկում և զարգացում	Տեսչական մարմնի անհատականացման և ճանաչելիության խթանում հանրության շրջանում: Տեսչական մարմնի գործունեության թափանցիկության ապահովում, հանրության հնարավորինս լայն շրջանակի իրազեկում ժամանակակից մեդիա միջոցների կիրառմամբ	Տարվա ընթացքում	ՀՏԱԲ	Կայքի և սոցիալական մեդիա էջերի բովանդակության պարբերական թարմացում, կայքում ներկայացվող նյութերի հասանելիությունն ապահովելու նպատակով համապատասխան բովանդակության մշակում, տեղադրում և համակարգում

5.	Տեղեկատվություն թեժ գծի, խորհրդատվական նյութերի պատրաստում և տարածում հանդիպումներ	ԶԼՄ-ների ներկայացուցիչներին՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ տեղեկատվություն, տեսչական մարմնի հանդեպ վստահության ձևավորում	Խորհրդատվական նյութերի պատրաստում և տարածում յուրաքանչյուր ամիս, խորհրդատվական հանդիպումներ ըստ ստուգումների ժամանակացույցի	ՀՏԱԲ, մասնագիտական ստորաբաժանում-ների հետ համատեղ	Հանրության լայն շրջանակին թվային հաշվետվություն՝ թեժ գծով ստացվող հարցումների և հանդիպումների մասին
6.	Հանդիպում-քննարկումներ, ՀԿ-ների և ԶԼՄ-ների մասնակցությամբ՝ պլանային և ըստ անհրաժեշտության	Հանրային առավել լայն արձագանքի ապահովումտեսչական մարմնի գործունեության առումով, վստահության բարձրացում մարմնի հանդեպ	II և IV եռամսյակներ	ՀՏԱԲ, մասնագիտական ստորաբաժանում-ների հետ համատեղ	Պլանային 2 հանդիպում
7.	Տեսչական մարմնի մասին մեդիա նյութերի արխիվի ձևավորում	Իրազեկման և քարոզչական քաղաքականության հստակեցում, խնդիրների վերհանում և լուծում	Մինչև 2019թ. դեկտեմբերի 30-ը	ՀՏԱԲ	Մեդիանյութերի արխիվ
8.	Իրազեկում-հանդիպումների կազմակերպումնախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ուսանողների և դպրոցների ավագ դասարանների աշակերտների հետ՝ չորս պլանային հանդիպում	Հանրության ավելի ակտիվ խավի իրազեկում, իրավագիտակցության բարձրացում, ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվության ստացում	I և II կիսամյակներ	ՀՏԱԲ, մասնագիտական ստորաբաժանում-ների հետ համատեղ	Հանդիպումների լուսաբանում տեսչական մարմնի առցանց աղբյուրներով և ԶԼՄ-ներով

Նշումներ (հապավումներ)՝

1 ՀՀ կրթության տեսչական մարմին **(ԿՏՄ)**
2 Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչություն **(ՌԳՍՊՎԳՎ)**
3 Հանրակրթության վարչություն **(ՀՎ)**
4 Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն **(ՆՄՄԿՎ)**
5 Իրավական աջակցության և փաստաշրջանառության բաժին **(ԻԱՓԲ)**
6 Հանրության հետ տարվող աշխատանքների բաժին **(ՀՏԱԲ)**
7 Որակի ապահովման բաժին **(ՈԱԲ)**

XII. Խորհրդատվական գործառույթների ժամանակացույցներ

Աղյուսակ 1

ՀՀկրթության տեսչական մարմնի հանրակրթության վարչության
2019 թվականի խորհրդատվական գործառույթների ժամանակացույց

N	Տնտեսավարող սուբյեկտի անվանումը	Վայրը	Հանդիպման ժամկետը
	Երևան		
1.	Նախադպրոցական ուսումնական հաստատություններ (այդ թվում ոչ պետական)	Երևան	Փետրվարի 2-3-րդ տասնօրյակներ
	Շիրակի մարզ		
2.	Հանրակրթական ուսումնական հաստատություններ	Գյումրի	Մարտի 2-րդ տասնօրյակ
	Երևան / մարզեր		
3.	Ավագ դպրոցների սովորողների և նրանց ծնողների հետ հանդիպում	Երևան/մարզ	Ապրիլի 2-3-րդ տասնօրյակներ
	Արագածոտնի մարզ		
4.	Հանրակրթական ուսումնական հաստատություններ	Արագածոտնի մարզպետարան	Մայիսի 1-ին տասնօրյակ
	Լոռու մարզ		
5.	Հանրակրթական ուսումնական հաստատություններ	Լոռու մարզպետարան	Օգոստոսի 1-2-րդ տասնօրյակներ
	Կոտայքի մարզ		
6.	Նախադպրոցական ուսումնական հաստատություններ	Աբովյան	Սեպտեմբերի 2-3-րդ տասնօրյակներ
	Երևան / մարզեր		
7.	Հանրակրթական ուսումնական հաստատություններ	Երևան	Հոկտեմբերի 1-2-րդ տասնօրյակներ
8.	Ավագ դպրոցների սովորողների և նրանց ծնողների հետ հանդիպում	Երևան/մարզ	Նոյեմբերի 2-3-րդ տասնօրյակներ

Աղյուսակ 2

ՀՀ կրթության տեսչական մարմնի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության 2019 թվականի խորհրդատվական գործառույթների ժամանակացույց

N	Տնտեսավարող սուբյեկտի անվանումը	Գտնվելու վայրը	Ժամկետը
ԵՐԵՎԱՆ			
1.	Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարան հ. 5	Ք.Երևան	հունվար
2.	Երևանի Ռ.Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ		
3.	«Հայաստանում ֆրանսիական քոլեջ» հիմնադրամ		
4.	Երևանիհ. 8 արհեստագործական պետական ուսումնարան		
5.	Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր		
6.	Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջ		
7.	Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության, հայ-հունական պետական քոլեջ		
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
8.	Կապանի պետական բժշկական քոլեջ	Ք.Կապան	ապրիլ
9.	Կապանի արվեստի պետական քոլեջ		
10.	Գորիսի պետական քոլեջ		
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ			
11.	Կոտայքի «Սեբաստացու անվան բժշկական քոլեջ» կրթական հիմնադրամ	Նոր Գեղի	փետրվար
12.	Հրազդանի արհեստագործական պետական ուսումնարան		
13.	Աբովյանի հ. 1 արհեստագործական պետական ուսումնարան		
14.	Բյուրեղավանի արհեստագործական պետական ուսումնարան		
15.	Նոր Գեղիի պրոֆ. Աղաջանյանի անվան գյուղատնտեսական պետական քոլեջ		
16.	Նաիրիի արհեստագործական պետական ուսումնարան		
ՎԱՅՈՑ ՁՈՐ			
17.	Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ	Եղեգնաձոր	օգոստոս
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ			
18.	Գյումրու Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջ	Գյումրի	սեպտեմբեր
19.	Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարան		
20.	Գյումրու հ. 3 արհեստագործական պետական ուսումնարան		
21.	Ամասիայի արհեստագործական պետական ուսումնարան		
22.	Երևանի մենեջմենթի համալսարանի Գյումրիի կրթահամալիրի բժշկական քոլեջ		
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ			
23.	Արագածի արհեստագործական պետական ուսումնարան	Արագած	մայիս
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ			
24.	Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ	Վանաձոր	հունիս
25.	Ալավերդու պետական քոլեջ		
26.	Սպիտակի պետական քոլեջ		
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ			
27.	Դիլիջանի արվեստի պետական քոլեջ	Իջևան	մարտ
28.	Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ		
29.	Բերդի պետական քոլեջ		
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ			
30.	Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան	Երևան	հունվար